1598

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի գեմստուային ընտրութիւնների մասին։

12405

Յօդ. 1—3. Ընտրական իրաւունքից օգտւում են Հայաստանի Հանրապետութեան երկու սեռի քաղաքացիները, որոնք ընտրութեան օրը լրացրած կը լինին 20 տարին։

Նշում. Իսկական զինուորական ծառայութեան մէջ գտնուողները չեն մասնակցում ընտրութիւններին։

Յօդ. 2—4. Ընտրութիւններին չեն մասնակցում օրինական կարգով հաշմամիտ կամ խելագար ճանաչուածները, նաև խուլ ու համրերը, որոնք գտնւում են ուրիշի հոգատարութեան տակ.

Յօդ. 3—5. Ընտրողական իրաւունքներից զրկւում են.

1) Օրինական ոյժ ստացած դատավճիռներով դատարանի կողմից դատապարտուածները, եթէ նրանց իրաւունքները մինչ այդ չեն վերականգնած.

ա) Տաժանագիր աշխատանքի դատապարտուածները պատժի ժամանակամիջոցը լրանալուց յետոյ տասը տարուայ ընթացքում։

բ) Աքսորավայր ուղարկուածները, ուղղիչ բաժանմունքին դատապարտուածները, բանտարկութեան կամ ուղղիչ տներում բանտարկելութեան յանձնուածները. եթէ նրանք զրկուած են իրաւունքներից. կամ իրաւունքները սահմանափակուած են պատիժը կրելուց մինչև հինգ տարին լրանալը.

2) Նրանք, որոնք դատապարտուած են գոյութեան համար, բացի պատիժների վերաբերեալ 171 կանոնագրութեան նախատեսնուած յօդուածի 2 կէտում, որ գրում է հաշտարար դատաւորների կողմից (օրէնքն. ժողովածու, հատ. XV, 1914 թ.), խաբեբայութեան համար, իր խնամքին յանձնուած գոյքի վատնումի կամ սեփականացման համար, բացի վատնումի այնպիսի դէպքերից, որ նախատեսնուած է նոյն կանոնագրութեան 177 յօդուածի երկրորդ մասում և ուղղիչ ու բրէական պատիժների (Օրէնքն ժող. հատ. XV) 1681 յօդ. երկրորդ մասում (Օրէնքն. ժողվ. XV

12405

հատ.), յափշտակածի բաղցնելու համար, Նախօրօք յայտնի գողացած իրերի գտնելու կամ գրաւ վերցնելու, կաշառակերութեան և կաշառք տալու նոյնպէս և գէպի անառակութիւնը ներողամիտ լինելու, նոյնպէս և այն գործողութիւնների համար, որոնք ուղղուած են ընտրական իրաւունքի դէմ, զրկում են ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից պատիժը կրելուց յետոյ մինչև երեք տարին լրանալը։

3) Անկարող պարտապանները, որոնք դատարանի օրինական այդ ատացած որոշումներով ճանաչուել են դիտաւորեալ (չարակամ) մնանկներ, այդ որոշումից յետոյ երեք տարուայ ընթացքում

Յօդ. 4—6. Իւրաքանչիւր ընտրամասի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն միայն նրանք, որոնք մտցրած են այդ ընտրամասի ցուցակում։

Յօդ. 6—8. Ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից զրկում են ընտրական ցուցակ մտածներից նրանք որոնք ընտրութիւններից կատարելու ժամանակամիջոցում կը կորցնեն ընտրական իրաւունքները (յօդ.) նոյնպէս և նրանք, որոնց նոյն ժամանակամիջոցում ձերբակալուած կը լինեն օրինական այդ ատացած դատարանական որոշումների հիման վրայ կամ դատարանական իշխանութեան կողմից որևէ յանցաւոր գործունէութեան մէջ մեղադրելու համար եթէ որպէս պատժի չափ նրանց համար ընտրուած է կալանաւորումը (Содержаніе подъ стражею).

Յօդ. 5—7. Իւրաքանչիւր անձնաւորութիւն, որն ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունի, կարող է և ընտրուել, եթէ նոյն իսկ նա մտած չլինի ընտրական ցուցակների մէջ։

Յօդ. 7—25. Մինչև մի ամիս բանտարկութեան կամ մինչև հարիւր ռուբլի տուգանքի են ենթարկուում այն անձինք, որոնք ինքնակամ կերպով հանում են, ճգնում, փակցնում կամ փոփոխում հրապարակ գրուած ընտրական կոչերը, յայտագրերը կամ ցանկերը, որ գրուած են կամ յայտարարուած իրենց թեկնածուների ցուցակը ներկայացրած ընտրողների խմբակների կողմից։

Յօդ. 8—86. Մինչև վեց ամիս բանտարկութեան են ենթարկուում այն անձինք, որոնք բռնի կերպով մանում են նախընտրական պայքարի համար յատկացրած շէնքերը, որ գտնուում են թեկնածուների ցանկ ներկայացրած ընտրողների խմբակի տրամադրութեան տակ, նրանք, որոնք ոչնչացնում կամ փչացնում են նախընտրական պայքարի համար յատկացրած և համապատասխան կազմակերպութեան ձեռքի տակ գտնուած գրա-

կանութիւնը, և իրենց ներքոյ նրանք, որոնք յիշեալ կազմակերպութիւնների անունից զբաղող անձանց վերաբերմամբ բռնի այլ կամ սպառնալիք են գործադրում։

Յօդ. 9—87. Բանտարկուում է կամ ձերբակալուում այն անձնաւորութիւնը, որը թեկնածուի կամ նրան ներկայացնող կազմակերպութեան վարկի խախտելու կամ ուրիշ թեկնածուներ անցկացնելու համար կանխապէս սուտ տեղեկութիւններ է յայտարարում թեկնածուն անձին կամ նրա մասնաւոր կեանքին վերաբերեալ։

Յօդ. 10—88. Թեկնածուների աւելի ցանկից բէլարկութեան համար իր համաձայնութիւնը տուած թեկնածուի յայտարարութիւնը փոխող կամ կեղծող ենթարկուում է ուղղիչ բժշկանոցը նստելու պատժին. նոյն պատժին է ենթարկուում նաև այն անձնաւորութիւնը որ ընտրական յանձնաժողովին է ներկայացնում կեղծ կամ փոփոխած յայտարարութիւն թեկնածուի կողմից բէլարկութեան համաձայնութիւն տալու վերաբերմամբ։

Յօդ. 11—89. Թեկնածուների սխալ ցուցակներ կամ անվաւեր ընտրատոմսեր տարածողը ենթարկուում է բանտարկութեան։

Յօդ. 12—96. Ընտրական յանձնաժողովի պարապմունքները խանգարելում մեղադրուողները կամ թեկնածուների ցուցակ ներկայացրած ընտրողական մարմինների նախընտրական ժողովները բռնի այլով, անկարգութիւններով իր իրաւունքների չանազատումով արգելելու փորձեր անողները ենթարկուում են բանտարկութեան, եթէ նման գործողութիւն կատարել է մի քանի զինուած անձանց կողմից, որի պատճառով և ընդհատուել է յիշեալ ժողովներ կամ յանձնաժողովների պարապմունքները, չարագործները ենթարկուում են բանտարկութեան ուղղիչ տան։

Յօդ. 13—91. Այն հոգևորականը, որ ժամատաց թեան ընթացքում կամ անմիջապէս նրա վերջում եկեղեցում կամ ժամատաց թեան յատկացրած որևէ տեղում իր քարոզներով, դրակոնովիթիւն տարածելով կամ այլ միջոցով կաշխատի որ և է ազդեցութիւն գործել ընտրութիւնների վրայ, ենթարկուում է բանտարկութեան։

Յօդ. 14—92. Այն անձնաւորութիւնը որը շնորհի բանութեան, սպառնալիքի, խարէութեան, անտեսական կախումի կամ իշխանութեան չանազատմամբ կը խանգարի որ և է ընտրողի իր

ընտրողական իրաւունքը ազատ գործադրելու հարցում, ենթարկւում է բանտարկութեան։

Յօդ. 15—93. Անկարգութիւնների, սպառնալիքների և հաղորդակցութեան միջոցները ընդհատելու միջոցով ընտրողներին իրենց իրաւունքից օգտւելուն խանգարողները ենթարկւում է ուղղիչ բաժնի (НСПР. ДОМ.) բանտարկութեան մինչև երեք տարի ժամանակամիջոցով։

Յօդ. 16—94. Ռայօնական ընտրական յանձնաժողովների շէնքում բռնի գործողութիւններով, սպառնալիքներով, անկարգութիւններով, ընտրական ցուցակները տոմսերը և տուփերը փչացնելով կամ հասարակութեան յանձնաժողովի անդամների դէմ հանելով ընտրութեան գործողութիւնների կանոնաւորութիւնը խախտողները ենթարկւում են բանտարկութեան ուղղիչ բաժնում, եթէ այս գործողութիւնը կատարւած է գինւած մարդկանց կողմից, որի պատճառով ընտրութիւնները չէն կայանում, յանցաւորը ենթարկւում է տաժանակիր աշխատանքների մինչև վեց տարի տևողութեամբ։

Յօդ. 17—95. Ընտրութեան շէնքում նախընտրական պայքարում մեղադրւողները կամ ընտրութիւնների ժամանակ կարգ ու կանոն խանգարողները, կամ ընտրական Յանձնաժողովի նախագահի առաջարկութեամբ ընտրութեան շէնքից չը հեռացողները ենթարկւում են ձերբակալութեան։

Յօդ. 18—96. Ընտրողին կամ նրա ընտանիքի անդամին խոստումներով կամ գոյքային և անձնական շահերի առաջարկութեամբ ընտրութիւններին մասնակցութիւնից թեքելով կամ որոշ ուղղութեամբ ընտրել տալու մէջ մեղադրւողները ենթարկւում են բանտարկութեան։

Նոյն պատժին է ենթարկւում նաև ընտրողը, որը ընդունում է կամ պահանջում վերոյիշեալ (յօդ. 96) գոյքային կամ անձնական շահերը։

Յօդ. 19—97. Իր կամ ուրիշների օգտին ձայն տալու նպատակով ընտրողներին հիւրասիրողը ենթարկւում է ձերբակալութեան։

Յօդ. 20—98 Ընտրական իրաւունք չունեցողը կամ այդ իրաւունքից զրկւածը, եթէ գիտութեամբ մասնակցում է ընտրութիւններին—ձերբակալւում է։

Նոյն պատժին է ենթարկւում նաև մի անդամից աւելի թէկուզ և զանազան ընտրամասերում—ձայն տւողը կամ ուրիշի ձայնից օգտւողը, թէև այդ լինի վերջինիս համաձայնութեամբ։

Յօդ. 21—99. Մինչև 8 տարի ուղղիչ բաժնի է դատապարտւում նա ով որ դիտաւորեալ կերպով կը խեղաթիւրէ ընտրութիւնների հետևանքները թերթիկները հաւաքելիս, հաշւելիս կամ յայտնաբերելիս, կամ դիտաւորեալ կը փչացնի կամ կը զրաւի տրւած ընտրատոմսերը և կամ կեղծելով կաւելացնի ընտրատոմսերը կամ կը փոփոխի ընտրութիւնների կարգը։

Յօդ. 22—100. Ով որ օրէնքի հակառակ ընտրութիւնների ժամանակ կը յայտարարի ձայնատւութեան գաղտնիքի—կը ձերբակալւի։

Յօդ. 23—101. Ընտրական Յանձնաժողովի անդամը կամ այլ պաշտօնակատար անձինք. որոնք դիտաւորեալ կերպով կը խանգարեն ընտրութիւնների օրինական կարգը—այս կամ այն թեկնածուին կամ ցուցակին նպաստելու կամ վնասելու նպատակով կամ ընտրութիւնների վրայ որ և է կերպ ազդելու ցանկութեամբ—ձերբակալւում է, եթէ աւելի խիստ պատժի չի ենթարկւում այդ իրաւազանցութիւնների համար։

Յօդ. 24—102. Դատարանին է վերապահւում բացի վերոյիշեալ յօդւածներից՝ ենթարկել մեղաւորներին և այլ պատիժների

1) 86, 88, 90, 92, 93, 96, 87 և 131 յօդւածներում նախատեսնւած յանցանքներում մեղադրւողներին մինչև հինգ տարի ժամանակամիջոցով զրկել օրէնսդրական հիմնարկութիւններում և ինքնավարութեան մարմիններում ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից, սոյն դատավճիռը հրապարակօրէն յայտարարելով։

2) 87, 92, 96, 96 և 99 յօդւածներում նախատեսնւած գործողութիւնների համար դրամական տուգանք մինչև երեք հազար ռուբլի։

3) 86, 89, 90, 92, 96, 97 և 101 յօդւածներում յիշւած յանցանքների համար—եթէ մեղադրեալը պաշտօնակատար անձն է արձակւում է իր պաշտօնից։

Յօդ. 25—103. Սոյն (IX) գլխի որոշումներին կիրառւում է 1903 թ. Մարտի 22-ի քրէական օրէնսդրութեան առաջի գլուխը (Օրէնքների ժող. հատ. XV, 1909 թ.)։

Յօդ. 26—104. Յանցաւորների դէմ դատ բաց անելու իրա-

ունքը վերապահում է իրաքանչյուր ընտրողի, իբրև ներքաղաղ կոդմի։

Յօդ. 27—105. 85—88, 95 և 100 յօդուածներում նախատեսուած յանցանքներում մեղադրողների դէմ կարելի է դատբաց անել ընտրութիւնների օրից հաշուած երեք ամսուայ ընթացքում, իսկ սոյն (IX) գլխի այլ յօդուածներով մեղադրուողների դէմ վեց ամսուայ ընթացքում։

Յօդ. 28—106. Սոյն (IX) գլխում յիշուած յանցագործութիւններին վերաբերեալ գործերը, որոնց համար նշանակուում է բանտ կամ աւելի խիստ պատիժ,—վերաբերում են շրջանային դատարաններին երդեալ ատենակալների (присяжный засѣдатель) մասնակցութեամբ, իսկ միւս յանցանքներին վերաբերեալ գործերը վերաբերում են հաշտարար դատաւորներին։

Յօդ. 29—107. Ընտրողներին ոչ մի վարձատրութիւն չի տրուում ժամանակ կորցնելու, ապրուստի կամ ճանապարհի և այլ ծախսերի համար։

Յօդ. 30—108. Ընտրական յանձնաժողովներ կազմելու և զեմստուային ընտրութեանց գործերի յանձնաժողովների գործակատարութեան համար, գաւառական (уѣздный) ընտրական յանձնաժողովների որոշմամբ բաց են թողնուում ատանձին գումարներ ի հաշիւ Մինիստրական Խորհրդի ս. թ. Մայիսի 23-ին յատակացրած վարոի՝ Հայաստանի Խորհրդի Գրքի 27-ի (ս. թ.) որոշման հիման վրայ։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011034